

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ  
ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ  
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԵՎ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ  
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՍԵՂՄԱԳԻՐ**

Կոմիտեի աշխատակազմի տարածքային ստորաբաժանումների կողմից գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման, գույքի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման գծով 2015 թվականին հավաքագրվել է շուրջ 3 միլիարդ 330 միլիոն դրամ, որը նախորդ տարվա նույն ցուցանիշի համեմատ նվազել է շուրջ 12 %-ով, իսկ պետական տուրքի գծով փաստացի գանձվել է շուրջ 822 միլիոն դրամ, որը նվազել է շուրջ 7 %-ով: Իրականացվել է շուրջ 179870 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների և սահմանափակումների պետական գրանցում (նվազել է 16 տոկոսով), տրամադրվել է գույքի ու դրանց նկատմամբ գրանցված իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ շուրջ 311029 տեղեկատվություն (աճել է 8,6 %-ով):

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 15.01.2015 թվականի N 111-Ն որոշմամբ նախատեսվել է ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից իրականացնել ծրագրի՝ 64-րդ, 65-րդ կետերի միջոցառումները և 33-րդ, 34-րդ կետերի գերակա խնդիրները, որոնք ամբողջությամբ և սահմանված ժամկետներում կատարվել են:

Այսպես՝

**64-րդ կետով** նախատեսված «Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդի՝ ըստ նպատակային նշանակության (կատեգորիաների) հողերի 2015 թվականի կադաստրային գները (արժեքները) և կադաստրային գուտ եկամտի չափերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը 2015 թվականի մարտի 3-րդ տասնօրյակում ՀՀ կառավարություն ներկայացնելու վերաբերյալ միջոցառումը սահմանված ժամկետում կատարվել է և 19.03.2015 թվականին ընդունվել է Հայաստանի Հանրապետության կառավարության N 275-Ն որոշումը:

Որոշման ընդունումը բխում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ պարբերության և «Հողի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի պահանջներից՝ որի համաձայն ըստ նպատակային նշանակության հողերի կադաստրային գները յուրաքանչյուր տարի հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը, որը կիրառվում է պետական և համայնքային հողերը օտարման, վարձակալության, կառուցապատման իրավունքով տրամադրելու և այլ դեպքերում:

**65-րդ կետով** նախատեսված «Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդի առկայության և բաշխման վերաբերյալ 2015 թվականի հաշվետվության (հողային հաշվեկշռի) մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը 2015 թվականի սեպտեմբերի 3-րդ տասնօրյակում ՀՀ կառավարություն ներկայացնելու վերաբերյալ միջոցառումը սահմանված ժամկետում կատարվել է և 15.10.2015 թվականին ընդունվել է Հայաստանի Հանրապետության կառավարության N 1189-Ն որոշումը:

Որոշման ընդունումը բխում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 34-րդ հոդվածի պահանջներից, որի համաձայն հողամասերն անկախ սեփականության ձևից ենթակա են պետական հաշվառման: Պետական հաշվառումն իրականացվում է հողամասերի որակի ու քանակի, նպատակային նշանակության, հողատեսքերի և գործառնական նշանակության, սեփականության ու օգտագործման սուբյեկտների մասին ամբողջական տվյալներ ստանալու նպատակով: Պետական հաշվառումն իրականացվում է անընդհատ՝ սկզբնական հաշվառման ելակետային տվյալների հիման վրա՝ տարվա ընթացքում կատարված իրավական, որակական և քանակական փոփոխություններն արտացոլելով հաշվառման տեքստային ու գրաֆիկական փաստաթղթերում: Հողային ֆոնդում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կատարվում են փոփոխություններ, այդ թվում՝ նպատակային նշանակությունների ու սեփականության սուբյեկտների, հողատեսքերի ու գործառնական նշանակությունների, ինչպես նաև ոռոգվող հողերի կազմում: Այս բոլոր ընթացիկ փոփոխությունները տարեկան կտրվածքով ենթակա են պետական հաշվառման և պետք է արտացոլվեն Հայաստանի Հանրապետության ընթացիկ հողային հաշվեկշռում, որի տվյալներից օգտվում են շահագրգիռ բոլոր պետական մարմինները, ոչ պետական կազմակերպություններն ու անձինք:

Հողամասերի պետական հաշվառման արդյունքում կազմվում է Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդի տարեկան հաշվետվությունը (հողային հաշվեկշիռը)՝ յուրաքանչյուր տարվա հուլիսի 1-ի դրությամբ, որը հաստատում և հրապարակում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

**33-րդ կետ- ՀՀ համայնքների սահմանների ամրացում և (ՎԻ ՋԻ ԷՍ-84) <<WGS-84>> համակարգի ամբողջական ներդրման ավարտում, որից այլ մարմիններ և անձինք հնարավորություն կունենան օգտվելու**

2015 թվականին այս ուղղությամբ նախատեսված **57189.5** հազ. դրամ ընդհանուր արժողությամբ աշխատանքներն ամբողջությամբ կատարված են:

Աշխատանքի հիմնական նպատակն է հանդիսացել WGS-84 համաշխարհային գեոդեզիական կոորդինատային համակարգում մեկ միասնական քարտեզագրական հիմքի ներդրման նպատակով Հայաստանի Հանրապետության 3 մարզերում (Արագածոտնի, Արարատի, Արմավիրի) մնացած 102 համայնքների վարչական տարածքների համար նույնպես իրականացնել տեղագրական, կադաստրային և համայնքների վարչական սահմանների նկարագրման քարտեզների ու հատակագծերի համադրում և արդյունքում բացահայտված անճշտությունների վերացում, համայնքների վարչական սահմանների սահմանագծերի հանութային և շրջադարձային կետերի կոորդինատների վերահաշվարկում, որի արդյունքում այդ համայնքներում (Արագածոտնի մարզ՝ 61, Արարատի՝ 27, Արմավիրի՝ 14) ևս ունենք բաց հրատարակման տեղագրական, կադաստրային և համայնքների վարչական սահմանների նկարագրման քարտեզներ, ինչպես նաև համայնքների սահմանների հանգուցային և շրջադարձային կետերի կոորդինատներ՝ կապակցված ազգային գեոդեզիական ցանցի հետ:

Աշխատանքների իրականացման ընթացքում հիմնական ուշադրություն է դարձվել տեղագրական և կադաստրային քարտեզներում ու հատակագծերում առկա ճանապարհային ցանցին, ջրագրությանը, թաղամասերի արտաքին սահմանագծին, համայնքների վարչական սահմաններին, գծային օբյեկտներին և տարածքում առկա հստակ արտահայտված այլ խոշոր օբյեկտներին (շինություն, պարիսպ և այլն): Թվային տեղագրական քարտեզները հիմնականում ստեղծվել են համայնքների կադաստրային քարտեզագրման աշխատանքների ավարտից հետո, տարբեր տարիների ընթացքում հանութագրման տարբեր եղանակներով

ստացված նյութերի հիման վրա, հնարավորություն չէր ընձեռվում դրանք համադրել և այսօր առկա տեխնիկական հնարավորությունների կիրառմամբ նշված երկու քարտեզների համադրման շնորհիվ հնարավոր է դառնում բացահայտել տեխնոլոգիական պատճառներով տեղ գտած շեղումներն ու վերացնել դրանք:

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է եղել՝

1) աշխատանքների իրականացման տեխնիկական նախագծերի կազմում /ըստ մարզերի/.

2) կադաստրային, տեղագրական և համայնքների վարչական սահմանների նկարագրման քարտեզների համադրում և դրա արդյունքում առաջացած անճշտությունների ուղղում.

3) կադաստրային, տեղագրական և համայնքների վարչական սահմանների նկարագրման քարտեզների համադրման արդյունքում հայտնաբերված անճշտությունների դաշտային հանութագրում /ընդհանուր տարածքի մակերեսի մինչև 2%-ի չափով/.

4) համայնքների վարչական սահմանների սահմանագծերի հանութային և շրջադարձային կետերի կոորդինատների վերահաշվարկում և կատալոգների կազմում:

Կատարվել են ժամանակացույցով սահմանված հետևյալ աշխատանքները՝

- Տեխնիկական 3 նախագծերի կազմում,
- դաշտային դիտարկումների հիման վրա 2787 շրջադարձային կետերի որոշում, ուրվագծերի կազմում, կոորդինատների որոշում,
- 2787 սահմանանիշերի դաշտային դիտարկումների արդյունքների մշակում, հավասարակշռում, կոորդինատների հաշվարկում և կատալոգների կազմում,
- 102 համայնքների կադաստրային, տեղագրական և համայնքների վարչական սահմանների քարտեզների համադրման աշխատանքներ,
- Տեխնիկական 3 հաշվետվությունների կազմում:

Նկատի ունենալով, որ մինչև 2015 թվականն ընկած ժամանակահատվածում նույն աշխատանքներն իրականացվել են նաև Հայաստանի Հանրապետության մյուս բոլոր համայնքներում, ուստի պետք է փաստել, որ համայնքների վարչական սահմանների սահմանագծերի հանգուցային և բնորոշ կետերի ամրացումն ու դրանց կապակցումը WGS-84 համաշխարհային գեոդեզիական կոորդինատային համակարգում ստեղծված ազգային գեոդեզիական ցանցին 2015 թվականին ամբողջությամբ ներդրվել ու ավարտվել է, որից այլ մարմիններին ու անձանց օգտվելու հնարավորություն է ընձեռվել, բաց հրատարակման

էլեկտրոնային քարտեզները տրամադրվել են բոլոր նախարարություններին ու մարզպետարանների միջոցով՝ համայնքներին:

Ծրագրի իրականացման արդյունքում ստեղծված քարտեզագրագեոդեզիական նյութերի հիման վրա հետագայում հնարավոր կլինի իրավական ձևակերպում ստացած համայնքների վարչական սահմանների սահմանագծի հանգուցային կետերն ամրացնել բնության մեջ, ինչը թույլ կտա համայնքներին ունենալ պատշաճ ձևակերպված և տեղանքում ամրացված վարչական սահմաններ՝ իրենց կոորդինատներով և ուրվագծերով, որը հնարավորություն կտա ցանկացած պահին վերականգնել ոչնչացված սահմանանիշի գտնվելու տեղը:

**34-րդ կետ-ՀՀ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների (շահառուների) համար բազային երկրատեղեկատվական համակարգի քարտեզագրական հիմքի ստեղծում Գյումրի քաղաքում (1396.1 հա)**

2015 թվականին այս ուղղությամբ նախատեսված **64108.1** հազ. դրամ ընդհանուր արժողությամբ աշխատանքները ամբողջությամբ կատարված են:

2015 թվականին իրականացված աշխատանքի նպատակը Հայաստանի Հանրապետությունում բազային երկրատեղեկատվական ընդհանուր համակարգի մաս կազմող՝ Գյումրի քաղաքի 1396.1 հեկտար տարածքի քարտեզագրական հիմքի ստեղծումն է: Նշված աշխատանքները Գյումրի քաղաքի վարչական տարածքում սկսվել են 2013թ. (917,3 հա), շարունակվել են 2014 թ. (820 հա), 2015թ. (1396.1 հա) և ֆինանսավորման առկայության դեպքում անհրաժեշտ է շարունակել մինչև համայնքի ամբողջ տարածքը (4429,5 հա) ավարտելը, որից հետո այդ նույն աշխատանքները իրականացնելու անհրաժեշտություն կլինի նաև հանրապետության մնացած բոլոր քաղաքներում: 2005-2012թթ. նշված ուղղությամբ աշխատանքներ են իրականացվել նաև Երևան քաղաքում: Հայաստանի Հանրապետությունում ժամանակակից պահանջները բավարարող բազային երկրատեղեկատվական համակարգի ստեղծման արդյունքում կունենանք տեղանքի արդիական պատկերը տվյալ ժամանակահատվածում արտացոլող տեղեկատվական բանկ, որը հիմք է հանդիսանալու գերատեսչական տարբեր ոլորտների, այդ թվում՝ քաղաքաշինական, բնապահպանական, արդյունաբերական, անշարժ գույքի կադաստրի, տարածքների պլանավորման, գյուղատնտեսական հողերի հաշվառման, հողերի միավորման, հողերի օգտագործման և գոտիավորման սխեմաների կազմման, գույքահարկի

և գնահատման բազաների ճշգրտման, վարչական և տնտեսական գործունեության, մեկիորացիայի, երկրաբանական հետախուզական աշխատանքների, անտառտնտեսության, արտակարգ իրավիճակների ժամանակ օպտիմալ և օպերատիվ որոշումների կայացման, հանրապետության մարզերի, համայնքների և առանձին տարածքների զարգացման, օպտիմալ պլանավորման և այլ խնդիրների լուծման համար:

Հայաստանի Հանրապետության բազային երկրատեղեկատվական համակարգի տեղեկատվական բանկը պարունակում է գրաֆիկական և տեքստային հետևյալ տվյալները.

1. Վարչական սահմանը.
2. Աշխարհագրական անվանումները.
3. Անշարժ գույքը, այդ թվում՝ հողային ֆոնդը, շենք, շինությունները, գտնվելու վայրը (հասցեն), կադաստրային ծածկագիրը.

4. Ջրագրությունը.

5. Ռելիեֆը.

6. Գծային ենթակառուցվածքները, այդ թվում.

1) երկաթգծեր և ավտոմոբիլային ճանապարհներ (միջպետական, պետական, տեղական նշանակության).

2) գազատարներ, ջրատարներ, նավթամուղեր (վերգետնյա, ստորգետնյա).

3) հեռահաղորդակցության կապուղիներ (վերգետնյա, ստորգետնյա).

4) բարձր լարման էլեկտրահաղորդագծեր (վերգետնյա, ստորգետնյա).

5) կոմունալ ենթակառուցվածքներ (վերգետնյա, ստորգետնյա):

Գյումրի քաղաքում սույն ծրագրով իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

- Տեխնիկական նախագծի կազմում.
- գրասենյակային 1396.1 հա վերծանում.
- դաշտային 1396,1 հա վերծանում.
- նախորդ տարիների կատարված երկրատեղեկատվական և կադաստրային 1637.3 հա նյութերի համադրում օդալուսանկարների հետ և ճշգրտում.
- նախորդ տարիների կատարված 1637.3 հա նյութերի ճշգրտում.
- ստորգետնյա մայրուղային հաղորդակցուղիների 1396,1 հա հանութագրում կառուցապատ տարածքներում.

- օդալուսանկարների հիման վրա 1396,1 հա հատակագծերի թվայնացում.
- բազային ԵՏՀ համար 22337,6 հա շերտ անհրաժեշտ շերտերի ստեղծում, դասակարգում, թերթերի համակցում
- բազային ԵՏՀ համար 139610 տարր տվյալների հավաքագրում և ներմուծում տվյալների բազա.
- Տեխնիկական հաշվետվության կազմում: